ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/42 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ
(Փոքր մեխանիզացիայի վերանորոգման ծառայություններ)

ք. Երևան

16 հուլիսի 2019թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝
Արթուր Շահինյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ.
Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ
Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ
Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.
Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.
Բացակայում է՝ հանձնաժողովի նախագահ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու
Արմեն Գևորգյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ.
Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Ռաֆֆի Սաղդասարյան ԱՁ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցի կողմից ներկայացվել են սահմանված ժամկետում և համապատասխանում են հրավերի պահանջներին:

3. ***Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.***

3.1 Ընտրված մասնակից ճանաչել Ռաֆֆի Սաղդասարյան ԱՁ-ն 1-ին չափաբաժնով
Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

3.2 Հաստատել ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/42 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):
Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահող՝ _____ Ա. Շահինյան

անդամներ՝ _____ Գ. Բոյաջյան

_____ Ա. Մկոյան

_____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան